ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1

ք.Երևան « 14 » « 12 » 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Աշոտ Միրզախանյանի, որը գործում է «02» դեկտեմբերի 2021թ. Հրաման 2008-Հ հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 02.12.2021թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5, 7.15 և 7.16 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել են 224114500 (երկու հարյուր քսանչորս միլիոն հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 09.12.2021թ.-ին ներկայացվել է թիվ 19534007370/31 կանխավճարի բանկային երաշխիքը, ուստի կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել կանխավճար՝ 224114500 (երկու հարյուր քսանչորս միլիոն հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով և Պայմանագրում 4.1.1 կետը հաստատել նոր խմբագրությամբ՝

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 224114500 (երկու հարյուր քսանչորս միլիոն հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:»

1.2 Հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփափոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան-7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 220533332767000
02204739	ՀՎՀՀ 00851011
ՔԿ ղեկավարություն՝	Տնօրենի ժ/պ՝
Ա.Մանուկյան	Ա.Միրզախանյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 14 » « 12 » 2021 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Կանխավճարի վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	55321100/501	Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում	224114500	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն											

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011175016
02204739
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստ՝
Հաշիվ՝
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան-7
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011
Տնօրենի ժ/պ՝
Ա.Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ